ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԸ ՀՈՒՇԱԳԻՐ

Ժ. Ս. ԷՐՈՒՔՅԱՆ

Ղ. Աղայանի ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հուշագրությունը։ Ապրելով և ստեղծագործելով հայ հասարակական կյանքի պատմական կարևոր մի շրջափուլում, շփվելով ժամանակի գրական-մշակութային շատ գործիչների հետ, ակտիվ կերպով մասնակցելով հայ ազգային կյանքի անցուդարձին, Աղայանը ներքին մի պահանջ է զգում անդրադառնալու իր ապրածի պատմությանը, գնահատելու և արժեքավորելու կյանքի ճանապարհին հանդիպած դեմքերն ու դեպքերը։

Աղայանը գտնում էր, որ մեծ մարդկանց կենսագրական փաստերը՝ կյանքի պատմությունը, դրական ու ստեղծագործական մոմենտները, հայացքները, գաղափարները և այլն, իրենց շատ կողմերով ոչ միայն հետաքրքիր, այլև ուսանելի են սերունդների գաղափարական-բարոյական դաստիարակության համար։ «Եթե մեկի կենսագրությունը,— գրում է Աղայանը,— կրթական ոչինչ չի պարունակում իր մեջ, չարժե գրել»[1]։

Աղայանը հուշագրությամբ զբաղվել է անցյալ դարի 80-ական թվականների վերջերից։ Նրա առաջին հուշագրական բնույթի գործը թերևս 1888 թ. գրած «Մի թեթև հրահանգ մեր լեզվի ուղղագրության մասին» հոդվածի նախաբանն է։ Ապա հրապարակ են գալիս հուշագրական մյուս հոդվածները. «Մի կտոր իմ ինքնապատում կենսագրությունից» (1889 թ.), «Մի երես մեր նորագույն պատմությունից» (1890 թ.), «Իմ տեսակցությունը Խրիմյան հայրիկի հետ» (1892 թ.)։ Իսկ 1893 թ. Աղայանը «Մուրճում» հրապարակում է իր հուշագրական ամենածավալուն երկը՝ «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», որը հարուստ ու հետաքրքիր նյութ է պարունակում հասարակական կյանքի պատմության, միջավայրի, գրական, մշակութային և գաղափարական երևույթների վերաբերյալ։

Աղայանի հուշագրության, մասնավորապես «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» աշխատության առաջին գնահատականը տվել է «Մուրճ» ամսագրի խմբագիրը՝ Ավ. Արասխանյանը։ Նա Աղայանին բնորոշում է իբրև այնպիսի մի գործչի, որը «ջփում է ունեցել 60-ականից սկսած մինչև ներկայիս գրական, դպրոցական, մամուլի և ընդհանուր հասարակական շրջանների և նոցանում գործած ուժերի հետ»[2]։ Բացի դրանից, և դա գլխավորն է, Արասխանյանը Աղայանի հուշագրական երկը կարևոր ու արժեքավոր է համարում (նրա բառերով ասած՝ «պատմությունն ուսանելի է») այն բանի համար, որ այնտեղ տրվում է ժամանակի հայ հասարակական հարաբերությունների գաղափարական բախումների բավականին հետաքրքիր ջարադրանքը։ «Այդպիսի մի անձի

---

1 Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, Երևան, հ. 4, էջ 347։ Այսուհետև տեքստում միայն էջը։

2 «Մուրճ», 1894, № 3, էջ 153—154, «Զանազան լուրեր»։

գործունեության պատմություն,— շարունակում է «Մուրճի» խմբագիրը.— շահավետ պիտի լինի ընթերցողների համար, մանավանդ այն պատճառով, որ այդ ամբողջ պատմվածքում մի կյանք է ներկայացվում ժամանակակից առաջադիմական ձգտումների, ազատարական կռիվների, բնորոշ մի անձի համար ե թե իր ժամանակի համար»։

«Իմ կյանքի գլխավոր դեպքերը» գրքի մասին դրական է արտահայտվել նաև «Մշակը», որի գնահատականը ըստ էության չի տարբերվում Արասխանյանի գնահատականից։ «Նրա կյանքը հետաքրքրական է... Ապագա հայ պատմագրանը, անշուշտ, շատ մոխ նյութ կքաղեր թե՛ նրա գործունեության, և թե՛ նրա ժամանակի բնորոշման համար»[4]։

Ա. Տերտերյանը ևս բարձր է գնահատում Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» գիրքը, որը «պատիվ է բերում հայ մեմուարային գրականությանը»[5]։ Այս մեջբերումները խոսում են այն մասին, որ Ղ. Աղայանի հուշագրական երկը ունի որոշակի արժանիքներ, թե՛ հեղինակի անձնական, հասարակական կյանքի պատմության, և թե՛ զարաշրջանի հայ միջավայրի գրական, մշակութային և գաղափարական երևույթների գնահատման տեսակետից։

Սակայն Աղայանի հուշագրական երկն ունեցավ նաև բացասական գնահատականներ։ Օրինակ, «Արձագանքը» միտումնավոր կերպով աշխատեց գրական հասարակայնության աչքում արժեքազրկել այն։ Պարբերականը վկայակոչում էր Միքայել Լոռիս-Մելիքյանցի՝ 1886 թ. հոկտեմբերի 20-ին իր մի բարեկամին գրած նամակը. «Ես ոչնչացրի բազմաթիվ հատվածական գրվածքներ և հիշողություններ, որ վերջին հինգ տարվա ընթացքում գծագրել էի, ամբողջությամբ թողնելի միայն բուն վավերագրեր՝ արձանագրված թղթերում և նամակներում, որոնց հիման վրա ապագա պատմաբանը ինձանից ավելի անաչառ կերպով կարող է բոլոր անցքերի, եղածի նշանակությունը որոշել։ Թեև հիշյալ թղթերի մեջ կան տեղեկություններ, որոնք թե՛ օգուտ իմ և թե՛ ի վնաս իմ են խոսում, բայց ես ոչ մի թերթ չոչնչացրի»[6]։ Ապա Մելիքյանցը այն միտքն է զարդացնում, որ վերջին ժամանակներս ինքը «մի տեսակ զզվանքով է վերաբերվում դեպի ամեն մեմուարներ, հիշատակարաններ ու զանազան հիշողություններ», որ «այդ տեսակ հրատարակությունները խիստ բազմացել են և դարձել շանտաժի գենք և անձնապովության միջոց»։

Փաստերը ցույց են տալիս, որ Լոռիս-Մելիքյանցի նամակը չէր այն հիմնական շարժառիթը, որի պատճառով «Արձագանքը» հարձակվեց հուշագրի երկի վրա։ Պատճառը պիտի որոնել Աղայանի՝ դեպի պահպանողականների օրգանը ունեցած վերաբերմունքի մեջ, գաղափարական տարաձայնությունների մեջ։ «Արձագանքը» չարախնդում է հուշագրի վրա, նույնիսկ հեգնում նրան. «Մեծ զորավարի և պետական անձի այս կարծիքին համաձայն չէ, սակայն, մի այլ, եթե ոչ մեծանուն, գեթ մեծահասակ հայ՝ պ. Ղ. Աղայանցը։ Նա հայտնում է այն միտքը, թե «կյանքից ստացած փորձությունը ևս մի հարստություն է ետնորդներին կտակելու համար։ Եվ խոսքից գործի անցնելով, այս հարստության տերը կազմել է մի կտակ՝ «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» վերնա-

3 Նույն տեղում։

4 «Մշակ», 1911, № 131, հունիս 21։

5 Ա. Տերտերյան, Հայ հայրենասեր գրողներ, Երևան, 1942, էջ 94։

6 «Արձագանք», 1893, № 150, դեկտեմբերի 24, «Անարգ ամբաստանություններ» հոդվածը։

գրով, որ այս տարվա ապրիլի մեկից հրատարակում է ամսեամիս «Մուրճ» հանդեսում»[7]։

Սակայն ընդհանուր առմամբ Ղազարոս Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» համարվել է ոչ միայն հեղինակի ուշագրավ երկերից մեկը, այլև հայ իրականության պատմական մի շրջանի հասարակական հարաբերություններն ու գաղափարական բախումներն արտացոլող կարևոր մի աղբյուր։

«Իմ կյանքի գլխավոր դեպքերը», ժամանակաշրջանի հասարակական կյանքի բազմաթիվ կողմերը արտացոլելու հետ միասին, ընթերցողին ծանոթացնում է հայ ազգային շատ գործիչների։ Իր բազմակողմանի գրական-հասարակական գործունեության ընթացքում Աղայանը շփվել է զանազան մարդկանց հետ և իր հուշերում տարբեր առիթներով տալիս է վերջիններիս բնութագիրը։

Հուշագիրը հատկապես չի զբաղվել առանձին դիմանկարներ ստեղծելով, սակայն ազգային գործիչներին տված բնութագրությունները հաճախ մոտենում են դիմանկարային ժանրին և ցույց են տալիս հեղինակի ցայտուն շնորհքը այդ ուղղությամբ։

Աղայանի մտքերը, դատողությունները գրական-մշակութային գործիչների վերաբերյալ խիզախ են, համարձակ։ Նա իր բնութագրությունները տալիս է՝ ելնելով դեմոկրատական ըմբռնումներից ու գաղափարներից։

Հետաքրքիր է Ներսես Աշտարակեցուն տված բնութագիրը։ Իհարկե, Ներսես կաթողիկոսի կենդանության ժամանակ Աղայանը հոգևոր ու մտավոր այն զարգացումը չուներ, ինչ ստացավ հետագայում. նա տասնյոթ տարեկան էր, երբ մահացավ Ներսես Աշտարակեցին։ Ղ. Աղայանը կանգ է առնում Ներսեսի բնավորության էական գծերը բացահայտող հանգամանքի վրա՝ համարելով դա կերպարը բնորոշող էական մոմենտ։ «Ներսես կաթողիկոսը,— գրում է Աղայանը,— մի ինքնակալ էր, ոչ մի ձայն և ոչ մի իրավունք չէր տալիս ո՛չ ժողովրդին, և ո՛չ հոգևորականությանը։ Ամենայն բանում խառնվում էր և ամենայն պաշտոնի ինքն էր նշանակում։ Ինքն էր գործակալներ նշանակում նույնիսկ աշխարհականներից և ամենայն բողոք նրանց դեմ թողնում էր անկատար, որովհետև նա անպայման հավատում էր իր նշանակած մարդկանցը» (էջ 305)։ Ինչպես երևում է, հարցը վերաբերում է Ներսես կաթողիկոսի՝ ամեն ինչի մեջ խառնվելուն, ամեն տեղ իր ճաշակն ու տեսակետը անցկացնելու ցանկությանը, մի բան, որ հայտնի է նաև պատմության փաստերից։ Այնուհետև Աղայանը կանգ է առնում Ներսես Աշտարակեցու բնավորության մի այլ գծի վրա. կաթողիկոսը առանձին համակրանք չի տածել բանիմաց և ուսումնասեր մարդկանց նկատմամբ։ «Նա,— գրում է Աղայանը,— հեռացնում էր իրանից ազնիվ ու խելոք մարդկանց և մոտ քաշում շողոքորթներին և հիմարներին։ Ժամանակակից ուսումնականներից ոչ մեկը նրանից գոհ չի եղել, և ամենքն էլ դժգոհությամբ են հեռացել նրանից։ Նա ուսումնասեր մարդ չէր, այլ իշխանասեր, սիրում էր իշխել, տիրել և այսքան միայն» (էջ 305)։

Առհասարակ Աղայանի կիրքը Ներսես կաթողիկոսի բնութագրության հարցում այնքան ուժեղ է, որ նա գրական հատիկ չի տեսնում Աշտարակեցու գործունեության մեջ։ Ճիշտ է, նա մի առիթով նրան անվանում է «ազգասեր

---

7 Նույն տեղում։

մարդ», «ժիր», բայց միայն այդքանը։ Ընդհանուր առմամբ, Ներսես Աշտարակեցու գնահատման մեջ Աղայանը կորցնում է օբյեկտիվության չափանիշը։

Ղ. Աղայանի գծած դիմանկարների մեջ առանձնապես ուշադրության արժանի է Հարություն Խալիպյանի դիմաստվերը, որն ուրվագծված է մի շատ բնորոշ հանդամանքում։ Աղայանը և Միքայելը Մոսկվա գնալիս, ստիպված Ռոստովից թեքվում են Թեոդոսիա, այնտեղի տպարանում մի քանի ժամանակ աշխատելու, փող վաստակելու, ապա ճանապարհը շարունակելու համար. Թեոդոսիա գնալիս, իջնում են Թայշանում, ձուկ որսում և ծախում։ Ամբողջ ձուկը շուկա փոխադրելու համար մշակին տալիս են 30 կոպեկ, իսկ ձկների վաճառքից ստացած գումարը կազմում է 20 կոպեկ։ Այս կոմիկական վիճակի մեջ հիշում են Հ. Խալիպյանին։ «Այդ ժամանակ,— գրում է Աղայանը,— Թայշանումը բնակվում էր ավելի մեծ ձուկը, կատարյալ լևիաթան, որին կարող էինք ավելի թանկ ծախել... Հ. Այվազյանի վրա։ Դա էր աղա Հարություն Խալիպյանը» (էջ 354)։

Ապա գրողը մի գրությամբ դիմում է Խալիպյանին և խնդրում տասը ռուբլի, սակայն այդ խնդրանքին հաջորդում է սաստիկ մի հանդիմանություն, որ համարձակվել են «խանգարել հանգիստը»։ «Խալիպյանը,— գրում է Աղայանը,— որ մի դաժան կերպարանքով ծերունի է, հենց այդ դեմքը բավական էր, որ մարդ սարսափեր նրանից, բայց իմ համարձակ պատասխանը լսելով՝ հանգած հրդեհի պես՝ թշթշաց, խեղճացավ և աթոռի վրա նստելով՝ մի բոպե մտածեց ինքնիրան և մի այնպիսի բան առաջարկեց, թե լավ չի՞ լինի արդյոք, որ հենց ուղղակի Մոսկվա գնանք և սկսեց հաշվել, թե ո՞ր ճանապարհով ավելի էժան կնստի» (էջ 354)։

Այս փոքրիկ դրվագի մեջ Աղայանին հաջողվել է տալ հայ աղայական դասի ներկայացուցչի բնութագիրը։

Հարություն Խալիպյանի կողքին հուշագիրը գծում է Գաբրիել Այվազյանի դիմանկարը, որը սովորաբար ներկայացվում է իբրև հետադեմ գործիչ։ Աղայանը դիմում է հակադրության մեթոդին։ Նա որքան համակրում է աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհ. Այվազովսկուն, այնքան հակակրում է նրա եղբորը՝ Գաբրիել Այվազովսկուն։ Հետաքրքիր, միաժամանակ բնորոշ մի դեպք է պատմում հեղինակը։ Թեոդոսիայի սրճարաններից մեկում մի օր Աղայանին և Միքայելին կալանավորում են։ «Նկարիչ Այվազովսկու տունը,— գրում է Աղայանը,— գողեր էին մտել և նրա տան կառավարիչին մահացու վերք տալով՝ հափշտակել էին թանկագին բաներ։ Գողերը չերքեզի հագուստով էին եղել, մենք էլ այդպիսի հագուստներ ունեինք»։ Բայց երբ կալանավորներին տանում են նկարչի մոտ, վերջինս ազատում է նրանց։ «Այդտեղ,— գրում է Աղայանը,— առաջին անգամ տեսա ես հանճարավոր Այվազովսկուն։ Շատ դուր եկավ նա ինձ իր վայելչակազմ հասակով և համակրելի դեմքով։ Զդիտեմ ինչո՞ւ ազատել տվավ մեզ, արդյոք գիտե՞ր, որ մենք իր եղբոր գրաշարներն ենք, թե իբրև նկարիչ՝ մեր դեմքերից նշմարեց, որ մենք գողի պատկեր չունենք» (էջ 357)։

Ինչպես երևում է, առաջին իսկ հանդիպումը անջնջելի տպավորություն է թողնում ապագա գրողի վրա, մինչդեռ քահանա Այվազյանը «արհամարհանք» է առաջացնում։ Աղայանը ընդգծում է Գաբրիել Այվազովսկու փառասիրությունը, նրա անհագ ձգտումն ու մղումը դեպի փառքը։ «Երկու Այվազովսկիները ջոկ-ջոկ աստղի տակ էին ծնված։ Աշխարհային փառքը մեկի

ետևիցն էր վազում, մյուսի՝ առջևից։ Նկարիչը չէր կարող փառքի ձանկերից ազատվել, որքան էլ փախչեր նրանից, իսկ նրա եղբայրն իզուր էր չարչարվում փառքի ետևից հասնելու» (էջ 358)։ Այս տողերը ցայտուն կերպով բնորոշում են և՛ մեկին, և՛ մյուսին։

Գաբրիել քահանա Այվազյանը ունենալով կղերական աշխարհայացք, իր գիտելիքները ծառայեցնում էր հասարակական կյանքի ետագեմ ուժերին՝ անհաշտ պայքար մղելով կյանքի առաջավոր գաղափարների դեմ։ «Մեծ գիտնական էր, բայց ոչ դրական, այլ բացասական մտքով առած այդ բառը», նկատում է Աղայանը և ապա ավելացնում, որ Այվազյանը իր «բացասական գիտություններով, կղերա-պահպանողական հայացքներով և ըմբռնումներով չի կարող ղեկավարել ժողովրդին, նրան չի տանի առաջ, այլ կտանե դեպի նախապատմական խավար դարերը» (էջ 360)։

Աղայանը ընդամենը երկու անգամ է հանդիպել Ստ. Նազարյանին։ Առաջին հանդիպումը խիստ տհաճ տպավորություն է թողնում երիտասարդ Աղայանի վրա, բայց հետագա հանդիպումը հնարավորություն է տալիս ճիշտ հասկանալու նրան։ Հուշագիրը ճիշտ է ներկայացնում Նազարյանի դերը հայ հասարակական կյանքի զարգացման մեջ։ «Այդ մարդը,— կարդում ենք Աղայանի հուշերում,— հիմք գրավ գրական լեզվին ու ուղղության և նոր գրական դպրոց ստեղծեց, որով սարսափելի հարված տվավ ընդարմացած և թմրած ուղեղներին։ Նազարյանցի այս մեծ գործը դեռևս ըստ արժանվույն գնահատված չէ հայ հասարակության և նորագույն գրագետների կողմից, որոնք շատ թեթև աչքով են նայում նրա աշխատության և ուղղության վրա։ Նազարյանցի և Աբովյանցի նմանը դեռևս չի ծնվել մեր մեջ։ Առաքյալներ շատ ունենք, բայց հիմնադիրներ՝ և ո՞չ մեկը» (էջ 375)։

Աղայանը չի անտեսում նաև Նազարյանի պատմական այն խոշոր դերը, որ նա կատարեց իր «Հյուսիսափայլով» հայ հասարակական կյանքում։ Բայց և այնպես նա չի համակրում «Հյուսիսափայլի» խմբագրին։ Մոսկվացի հայերից միայն սիրում էր Սմբատ Շահազիզին, որի «Լևոնի վիշտը» շարելուց հետո թողնում է «Հյուսիսափայլի» տպարանը։

Դեմոկրատ գրողը իր հուշագրության էջերում առանձին հակակրանքով է խոսում կղերական գործիչների մասին։ Այս տեսակետից բնորոշ է հայտնի կղերական Վահրամ Մանկունու դիմանկարը։

Մանկունին հուշերում ներկայացվում է որպես քինախնդիր ու նախանձոտ մի անձնավորություն։ Լինելով Գևորգ Դ. կաթողիկոսի օղնականն ու խորհրդատուն, Մանկունին էջմիածնում ձեռք էր բերել ազդեցիկ դիրք և ամեն կերպ աշխատում էր այն օգտագործել իր փառասիրական և շահադիտական նպատակների համար։ Դա առանձնապես զգալի էր, երբ Աղայանը աշխատում էր էջմիածնում իբրև «Արարատի» խմբագիր։

Մանկունուն, ինչպես նաև հոգևորականներից շատերին, դուր չէին գալիս Աղայանի առաջադիմական հայացքները։ Հակաաղայանական արշավանքին տոն տվողը, իհարկե, Մանկունին էր, ուստի Աղայանը մերկացնում է նրան որպես բռնակալի ու ետագեմ կղերականի. «Ձեռք առնելով վեհափառի ուժը,— գրում է հուշագիրը,— այսինքն նրա բարեհաճությունը, նրանով տիրեց ամենքին։ Կորցրեց իր համեստությունը և ինքն իրեն մի Բիսմարկ երևակայեց, մոռանալով այն, ինչ որ երբեք չի էլ իմացել, թե իր տիրապետությունը բարոյական և մտավոր ուժի հետևանք չէ, վարչական ընդունակության գործ չէ,

այլ այնպիսի մի բան, որ կարող չէ անել ամենասինլքոր մանկլավիկն անգամ» (էջ 442—443)։

Ղ. Աղայանի պայքարը խավարամիտ կղերականների դեմ եղել է նրա գրական-հասարակական գործունեության օրգանական մասերից մեկը։ Ահա թե ինչու հոգեսրականությունը միշտ դժգոհել է նրանից և ատելի բաց չի թողել նրան հալածելու։

Երբեմն Աղայանը ձգտում է ներկայացնել կղերի բացասական էությունը, այնքան համակրում է գրականության դեմոկրատական թևին պատկանող հայ ազգային գործիչներին, հեղափոխական դեմոկրատիայի գաղափարախոսներին։ Ճիշտ է, հուշերում համեմատաբար ժլատ տողեր են նվիրված վերջիններիս, բայց այդ սեղմ բաների միջից ընթերցողի առջև հառնում է Աղայանին համակրելի մարդու գաղափարական ու բարոյական վսեմ կերպարանքը։ Այս կամ այն գործչի դիմանկարը կերտելիս Աղայանը համապատասխան գույներ է վերցնում իր ներկապնակից, և ընթերցողը ատում է նրան, ում հակակրում է Աղայանը, և հակառակը։

Հուշագիրը ջերմությամբ է խոսում Պոռշյանի մասին՝ բարձր գնահատելով նրա ծառայությունները հայ գրականության և մշակույթի զարգացման գործում։ Պոռշյանին բնութագրելիս նա հատուկ նշում է անվանի վիպասանի փայլուն ընդունակությունները. «Պետք է ասեմ, որ ես Պոռշյանին հիշում եմ դեռևս Ներսիսյան գպրոցում, երբ նա վերջին դասատանն էր, և անկարելի էր չհիշել, որովհետև մեր վարժապետները բոլոր աշակերտներիս մատով էին ցույց տալիս նրան, որ դպրոցի ծաղիկն էր և ամենից առաջադեմը» (էջ 346)։

Պիտի նկատել, որ Աղայանը, այնուամենայնիվ, Պոռշյանին գնահատելիս մի հարցում սխալվում է, երբ գրում է, թե «նա մնաց մի կետի վրա կանգնած, այսօր էլ նույնն է, ինչ որ երեսուն տարի առաջ»։ Պոռշյանի երկերին ուշադիր հետևողը չի կարող չնկատել աշխարհայացքային աստիճանական զարգացման այն վերելքը, որ ապրեց Պոռշյանը «Սոս և Վարդիթերից» մինչև «Հունոն» վեպը։

Պ. Պոռշյանի հոգևկան պարզ ու պայծառ աշխարհը, նրա մարդկային բարի և աղնիվ գծերը, բարոյական անաղարտությունը ընդգծում է Աղայանը. «Նրա համար մեծ ու փոքր չկար և այսօր էլ չկա, ամենքի հետ վարվում էր ինչպես իր հավասարի հետ» (էջ 356)։

«Իմ կյանքի ղլխավոր դեպքերը» գրքում ընդամենը մի էջ է նվիրված Միք. Նալբանդյանին, բայց այդքանն էլ լիարժեք գաղափար է տալիս մեծ հրապարակախոսի և հեղափոխական-դեմոկրատի մասին։ Ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում Նալբանդյանի գաղափարական աշխարհը, նրա կերպարի վեհությունը, այն, որ Նալբանդյանը գաղափարական-իմացական մակարդակով, հասարակական-քաղաքական ըմբռնումներով Նաղարյանից անհամեմատ բարձր էր կանգնած։ «Այս մարդուն,— կարդում ենք հուշերում,— առաջին անգամ տեսել էի Թիֆլիզ, ուր եկել էի էջմիածին գնալու համար։ Այդ ժամանակ մենք հափշտակվեցանք նրա ճարտար հայախոսության վրա։ Գրական լեզվով մենք դեռևս թոթովում էինք. այդպես չէր Նալբանդյանը, նրա լեզուն արդեն կազմակերպվել էր և խոսում էր այնպես, ինչպես որ գրում էր։ Բայց որքա՜ն զարգացել էր մտավորապես և որքա՜ն ետ թողել իրենից Ստ. Նաղարյանցին» (էջ 402)։ Աղայանը միաժամանակ ընդգծում է Միք. Նալբանդյանի հոգևկան աշխարհի գեղեցկությունը, աղնվությունն ու բնավորության.

շիտակությունը։ Հայտնի է, որ ռուս հեղափոխական-դեմոկրատներն էլ իրենց հերթին Նալբանդյանին համարել են հազվագյուտ հոգու տեր մարդ։ «Նալբանդյանցի տաղանդը, մտավոր զարգացումը, լեզվի հարստությունը անհամեմատ բարձր էր Ռ. Պատկանյանից, իսկ բնավորությամբ շիփ-շիտակ էր Նալբանդյանցը, ինչպես ուղիղ վեր բարձրացող մի բարդի» (էջ 402)։

Երկու անձանց համեմատական կարգի տակ դնելը Աղայանի դիմանկարային արվեստի առանձնահատկություններից է։ Այսպես է վարվում հուշերի հեղինակը նաև ուրիշ դեպքերում (Մանկունի, Այվազովսկի և այլն)։

Իր հուշերում Ղ. Աղայանը անդրադառնում է ուրիշ գործիչների, գրականության, մշակույթի, մամուլի, հոգևոր դասի ուրիշ շատ ներկայացուցիչների ևս, որոնք, իհարկե, հեռու են լիարժեք դիմանկարներ լինելուց։ Այդպիսիք են Բաֆֆուն, Էմինին, Ախվերդյանին, Ավ. Բաբայանցին և այլոց նվիրված էջերը։ Դրանք ոչ միայն բացահայտում են Աղայանի գեղագիտական ճաշակն ու ըմբռնումները, հասարակական-քաղաքական հայացքները, այլև հանդիսանում են տվյալ գործիչների ճշմարիտ բնորոշումներ։ Այսպես, Աղայանը ընդգծում է Բաֆֆու վառ երևակայությունը, խորաթափանց միտքը. «Բավական էր մի փոքրիկ հատիկ, որ նրանից նա մի բան աճեցներ» (էջ 430)։ Իսկ Քաջբերունուն նա բնորոշում է պարզապես մի նախադասությամբ. «Քաջբերունու պես մարդիկ,— ասում է հուշերի հեղինակը,— ծածկված են մնում աննշան թուրքական գյուղերում, իսկ շինովի անշնորհքները մեծ քաղաքներում իրանց ժողովրդի ղեկավարող են հանդիսացնում» (էջ 432)։

Այսպիսի բնութագրություններ շատ կան Աղայանի մեմուարներում՝ համառոտ ու սեղմ, բայց բնորոշ ու դիպուկ՝ գործի էությունը բացահայտելու տեսակետից։

Ճիշտ է, ազգային գործիչներին տրված գնահատականներում, բնութագրություններում կան նաև սուբյեկտիվ մոտեցման դեպքեր, որոնք մեծ մասամբ պայմանավորված են մեմուարային գրականության բնույթով և առանձնահատկություններով։ Բայց, ընդհանուր առմամբ, Աղայանը աշխատել է գտնել այս կամ այն գործչի դիմանկարը առավել հավաստի և ճշմարտացի արտահայտող բնորոշ գծեր։

«Իմ կյանքի գլխավոր դեպքերը» արժեքավոր են նաև Աղայանի ուսումնասիրության, ստեղծագործական կյանքի պատմության հարցերի բացահայտման տեսակետից։

Հեղինակը տարբեր առիթներով անդրադառնում է իր երկասիրություններին, հաղորդում ընթերցողին ուշագրավ փաստեր։ Հուշագիրը ոչ թե պասսիվ խոսակցություն է վարում իր գեղարվեստական այս կամ այն երկի մասին, այլ տալիս է որոշ մեկնաբանություն, գնահատական, որոնք ինքնին հետաքրքիր են գրողի ստեղծագործական աշխարհը բազմակողմանի պատկերացնելու համար, թեև նա ոչ միշտ է ճշմարտացի սեփական երկերի գնահատման և մեկնաբանման հարցում։

Աղայանի կյանքի պետերբուրգյան շրջանը կարևոր է նրա մտավոր զարգացումը պարզելու, գրական գործունեության սկիզբը բնորոշելու տեսակետից։ Վիպասանի անդրանիկ ծավալուն կտավը՝ «Արություն և Մանվելը» կապված է պետերբուրգյան շրջանում Կարապետ Եզյանի կազմակերպած ուսանողական ժողովների հետ։ Դեռևս 1858—59 թթ. Մոսկվայում հիմնադրվում է

ուսանողական ժողով, որը չքավորներին օգնելու անվան տակ քաղաքական աշխատանքներ էր տանում։ Շուտով նույնպիսի ուսանողական ժողով կազմակերպվում է նաև Պետերբուրգում։

Կարապետ Եղյանի խումբը իր հավաքույթներում քննարկում էր լեզվի, դրականության և դանաղան այլ խնդիրներ, որոնք նպաստում էին հայ ուսանողների մտավոր և հոգևոր առաջընթացին։ Ղազարոս Աղայանը դառնում է ուսանողական ժողովի անդամ։ Մի երեկո Եղյանը սեղմում է ապագա գրողի ձեռքը և ասում. «Հուսով եմ, որ եկող ժողովին դուք էլ մի բան կբերեք կարդալու»։ Ոգևորված ժողովի անդամ լինելուց, Եղյանի վերաբերմունքից, Աղայանը սկսում է գրել իր անդրանիկ վեպը. «Եվ սկսեցի գրել իմ «Արություն և Մանվելը», որի մեջ ուզեցի դուրս բերել ինձ, չմոռանալով և իմ Միքայելին, որին շինեցի Մանվելը։ Չգրեցի «Հարություն», այլ «Արություն», իբր արիություն, այրություն, քաջություն, այդ հատկությունները գտնելով հերոսներիս մեջ» (էջ 389)։

Աղայանի ներշնչանքն այնքան մեծ է եղել, ոգևորությունն այնքան հախուռն, որ չի հասցրել անդամ զգացմունքները թղթին տալ։ Հուշագրական էջերը ցույց են տալիս, որ Աղայանն իր առաջին գիրքը գրել է հուզված, հափշտակված վիճակում, լացել ու խնդացել է հերոսների հետ, ապրել նրանց բախտով ու ճակատագրով, մանավանդ, որ վեպը ինքնակենսագրական շատ տարրեր ունի։

Վիսյասանն իր երկի գնահատմանը անդրադառնում է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հետ ունեցած առնչությամբ։ Հայտնի է, որ Աղայանը շարունակեց Աբովյանի ավանդները դրականության մեջ։ Ժամանակին քննադատության մեջ նշվել է, որ Աղայանի «Արություն և Մանվելը» իր վրա կրում է «Վերք Հայաստանի» ազդեցությունը։ Սակայն, ինչպես նկատում ենք հուշերում, հեղինակը, չդիտես ինչու, ժխտում է այդ փաստը՝ համարելով իր երկը բոլորովին «նոր ուղղության» պատկանող։ «Ոմանք այն միտքը տարածեցին ընթերցող հասարակության մեջ, որ իբր թե իմ աշխատությունը մի հետևություն է անմահ Աբովյանի վեպի։ Այդպես չէ» (էջ 395)։ Աղայանը ոչ միայն ժխտում է «Վերքի» ազդեցությունը, այլև այն համարում է «ողբ հայրենիքի թշվառության վրա»։ Աբովյանի վեպը համարել մի ողբասացություն և չտեսնել նրա կրակոտ էջերում ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, իհարկե, սխալ է։ Աղայանը «Վերքում» չի տեսնում նաև պայքարը հնի և հետամնացության դեմ, այդ բոլորը նա վերագրում է իր վեպին։ Հուշագիրը, անշուշտ, գերագնահատում է իր անդրանիկ գիրքը և ակամայից նսեմացնում իր մեծ նախորդին։

Կառուցվածքային տեսակետից էլ Աղայանը «Արություն և Մանվելը» բարձր է դասում «Վերքից», մի բան, որի հետ դարձյալ չի կարելի համաձայնել։ «Վերք Հայաստանի» մեջ,— գրում է հուշերի հեղինակը,— ստույգն ու անստույգը, ռեալակտնը և իդեալականը խճողված են իրար հետ, մինչդեռ «Արություն և Մանվելը» իրականի նկարչական պատկերն է դնում ընթերցողի առջև։ Գեղարվեստական տեսակետից «Վերք Հայաստանին» սրտի խորքից

---

8 Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, 1956, հ. 2, էջ 189—190։

բխած մի բնական ժայթքում է, հեղինակը միտք չի ունեցել իր շենքի գեղեցկության վրա ուշ դարձնելու» (էջ 396)։

Մեջբերումները, որոնք կարելի է շարունակել, ցույց են տալիս, թե ինչպիսի գնահատական է տալիս Աղայանը իր անդրանիկ վեպին, անտեսելով «Վերքի» մի շարք էական կողմեր։

«Իմ կյանքի գլխավոր դեպքերից» իմանում ենք, որ «Արություն և Մանվելը» շատ կողմերով կենսագրական բնույթ ունի։ Եվ հուշագիրը պատճառաբանում է, թե ինչո՞ւ է դիմել ինքնակենսագրական վեպի ժանրին։ Հայտնի է, որ գեղարվեստական երկի գլխավոր հերոսը մեծ մասամբ հեղինակի գաղափարակիրն է։ Հայ գրական զարթոնքի ժամանակաշրջանում, երբ բարոյական ու գաղափարական կռիվ էր գնում հնի և նորի միջև, Աղայանը փնտրում է «ժամանակակից մի հերոս», որի միջոցով կարողանար արտահայտել իր առաջավոր տրամադրությունները, ձգտումները, գաղափարները։ Բայց հետամնաց և խավար իրականությունը հուշագրին այդպիսի հերոս չի տալիս և նա էլ դիմում է... ինքն իրեն։ «Ինձ հարկավոր էր ժամանակակից մի հերոս, ծանոթներիս մեջ ինձանից լավը չգտա» (էջ 341)։

Հետաքրքիր տեղեկություններ է հայտնում հեղինակը իր անդրանիկ բանաստեղծության մասին՝ «Հարկավոր է օգնել չքավորներին»։ Պարզվում է, որ Աղայանը տպարանում աշխատած ժամանակ շատ էր գրում, բայց ցույց չէր տալիս ոչ ոքի և ուղարկում էր գյուղ։ Ահա մի անգամ «Մեղու Հայաստանի» թերթի հերթական համարում նյութի պակասություն է զգացվում, Աղայանը պատրաստի ուներ վերոհիշյալ բանաստեղծությունը, այդ էլ տպագրվում է։

Հուշերից պարզվում է նաև, որ Աղայանը Պետերբուրգում ապրած ժամանակ մի ծավալուն «երկար ոտանավոր» է գրել (հեղինակը այն նույնիսկ անվանել է «պոեմա»)։ Վերջինս մեզ չի հասել. Աղայանը պառկած էր հիվանդանոցում, իսկ նրա հրեուհի տանտիկինը, սենյակը մաքրելիս, մի շարք այլ թղթերի հետ այդ պոեման էլ գցել է հնոցը։

Հետաքրքիր են հուշերի այն էջերը, որոնք վերաբերում են մանկական երկերի մտահղացմանը և ստեղծագործական պատմությանը։

Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» գիրքն հետաքրքիր և արժեքավոր հուշագրային մի աշխատություն է, որն իր նշանակությունը կպահպանի երկար ժամանակ։

ГАЗАРОС АГАЯН — МЕМУАРИСТ

Ж. С. ЭРУКЯН

Резюме

Выдающийся писатель и педагог Газарос Агаян (1840—1911) занимает важное место и в армянской мемуарной литературе. В целом ряде статей и, в частности, в книге «Главные события моей жизни» (1893) Агаян правдиво и интересно рассказал о характерных явлениях армянской действительности, которые он наблюдал, о людях, с которыми он встречался.

В настоящей статье рассматриваются следующие вопросы: как были встречены мемуары Агаяна армянской критикой, как в них характеризуются видные деятели общественной жизни, что дают воспоминания писателя для выяснения творческой истории его произведений.